




Յոր սակս եւ ՚ի գործ մի դժխեմ բերաւ Լեւոն, գոր օրէնք կամ չարաչար սովորութիւն այնր ժամանակի արքունեաց Բիւզանդացոց՝ արդարացուցանէին, յաճախ իսկ գործելով, այսինքն է խեղելով կամ խաւարեցուցանելով զթեկնածոս եւ զակնկալոս թագաւորութեան: Այսպիսի որ ՚ի Սիսուան մարթ էր միայն լինել յարուաց զարմին Ռուբինեանց, եւ ոչ որ էր մնացեալ ՚ի պանծալի տոհմէ անտի, բայց միայն յօտար անկողնոյ ծնեալ որդի մի Մլէեի՝ հօրեղբօրն Լեւոնի, *Գորգ* անուն. որ զի եւ բերէր զբարս հօրն՝ խրոխտ գոլով եւ «այր գոռոզամիտ, եւ ՚ի զինուորութեան արիագոյն, եւ սեղանով առատ, եւ բազումք յարեալ էին ՚ի նա եւ սիրէին զնա. յորս եւ կասկածէր թագաւորն՝ յաղագս հակառակ յառնելոյ ժառանգութեանն, սպասելով դիպող ժամու». սակայն թեպէտ եւ օտարախառն՝ իբրեւ յարենակից իւր զնդայր ՚ի նա, մինչեւ շրջեցին զնա ՚ի մտաց արք քսութ, արծարծանելով զկասկածանս ինչ նորա, բարդելով՝ ո՛ր գիտէ՝ որպիսի՝ բարուրս խիթալիս. եւ գողացան ՚ի նմանէ հրաման՝ ունելոյ զնա եւ զրկելոյ ՚ի լուսոյ աչացն. առաւել քան զնորա մարմնոյն՝ զիւրեանց խաւարեցուցանելով զոգուցն տեսութիւն, եւ ստուեր իրաւացի զթագաւորան ածելով. բայց եթէ եւ գոյր ինչ նոցա իրաւացի փաստ բամբասանաց զԳորգայ՝ այն չէ ծանուցեալ. եւ առաւել զոհ համարի բարբարիկոն սովորութեան ժամանակին՝ քան արդարակորով իրաւանց:

Մինչեւ ցվերջին եւ յաղթական մուտսն յԱնտիօք (1216), եւ հաստատելն զՌուբին ՚ի բռնաբարեալ գահ նորին, յայս միտս էր Լեւոն, պայա-